ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/32

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Սենտրալ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Զաքարյանի, ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սենտրալ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 22.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումը,
2. պայմանագիր կնքելու մասին որոշումը,
3. գնման ընթացակարգը 1, 2, 3, 4, 5 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը,
4. Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկելու վերաբերյալ /մանրամասն նկարագրելով, թե ինչը պետք է շտկվի/:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.03.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 22.03.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/4779-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 22.03.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

23.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 համարի ծածկագիրը:

30.03.2022թ.-ին, 08.04.2022թ.-ին, 15.04.2022թ.-ին և 21.04.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.04.2022թ.-ին:

2. «Սենտրալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սենտրալ» ՍՊԸ-ն 22.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության /կցվում է/ համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում միաժամանակ լրացված է և 4.5 և 4.6 բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5 կամ 4.6 բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5 /և 4.6/ բաժնում մասնակցության չափը նշել եք 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների /այդ թվում՝ կնքված գործարքների/ ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.7.1 բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:

Նույն արձանագրության 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը՝ ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ

թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ինչպես արդեն հայտնել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության /կցվում է/ համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում միաժամանակ լրացված է և 4.5 և 4.6 բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5 կամ 4.6 բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5 /և 4.6/ բաժնում մասնակցության չափը նշել եք 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների /այդ թվում՝ կնքված գործարքների/ ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.7.1 բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:

Այնուհետև, նույն արձանագրության 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը՝ ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, որով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին

մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումը,
2. պայմանագիր կնքելու մասին որոշումը,
3. գնման ընթացակարգը 1, 2, 3, 4, 5 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը,
4. Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկելու վերաբերյալ /մանրամասն նկարագրելով, թե ինչը պետք է շտկվի/:

Ընկերությունը 06.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով բողոքը, որով վիճարկվել ենք «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների իրավաչափության հարցը:

Սույնով ներկայացվում են լրացուցիչ փաստարկներ և ներկայացվում են հստակեցված պահանջներ:

Մասնավորապես.

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով հայտերի բացումը պետք է տեղի ունենար 03.03.2022թ.: Սակայն հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը կազմվել է միայն 10.03.2022թ.: Մասնավորապես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը կազմված է 10.03.2022թ.. որից պարզ է դառնում, որ այն գումարվել է հենց 10.03.2022թ.:

Մինչդեռ այդ նույն արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացրել է մի շարք որոշումներ՝ բացել մասնակիցների հայտերը, գնահատել ներկայացված հայտերը, արձանագրել անհամապատասխանություններ, գնահատել շտկված փաստաթղթերը և մերժել մասնակիցների հայտերը:

Մասնավորորապես, նույն 10.03.2022թ. արձանագրությամբ բացվել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը, նույն արձանագրությամբ արձանագրվել է անհամապատասխանություն ՍՊԸ-ի հայտում, նույն արձանագրությամբ տրվել է շտկում, նույն արձանագրությամբ մերժվել է ՍՊԸ-ի հայտը:

Այս պարագայում առաջանում է իրավաչափ հարց. եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը միայն 10.03.2022թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ է արձանագրել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն և կայացվել է որոշում տալ շտկմում՝ Կարգի 41-րդ կետի հիման վրա, ապա ինչպես է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկման պահանջ ներկայացրել դրանից ավելի շուտ, այն է մինչև 10.03.2022թ.: Ստացվում է, որ առանց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան նիտի հրավիրելը և որոշման կայացումը (որոշումը կայացվել է, արձանագրվել է 10.03.2022թ. կայացած նիստով) «Սենտրալ» ՍՊԸ-ին ներկայացվել է ոչ իրավաչափ, առանց համապատասխան իրավական հիմքի շտկման պահանջ, ինչը ուղղակիորեն հակասում է Կարգի 41-րդ կետի պահանջներին:

Տվյալ դեպքում գտնում ենք, որ նման ոչ իրավաչափ շտկման պահանջի հետևաքով առաջացած ՍՊԸ-ի համար բացասական հետևանքները՝ հայտի մերժումը, նույնպես իրավաչափ չեն:

Բացի այդ, խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը՝ ներկայացնող անձի կողմից, քանի որ այն ներկայացվել է հենց տնօրենի կողմից, իսկ տնօրենի կողմից այդ հայտարարգիրը ստորագրելու պահանջ տվյալ հավելվածով սահմանված չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գտնում ենք, որ նման պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման պահանջ ներկայացնելը իրավաչափ չէ, վերոհիշյալով խախտվել է Օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի պահանջները, որոնք նաև հանգեցրել են Կարգի 41-րդ պահանջների խախտմանը:

Խնդրում ենք որպես ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով բողոքի պահանջ ընդունել սույն լրացմամբ ներկայացրած պահանջները:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումները՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի մասով,
2. գնման ընթացակարգը 1, 2, 3, 4, 5 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը,
3. Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին՝ շտկում կատարելու վերաբերյալ:

Ընկերությունը 07.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

««Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով բողոքը, որով վիճարկվել ենք «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների իրավաչափության հարցը:

Սույնով ներկայացվում են լրացուցիչ փաստարկներ, որոնք հիմնավորում են թե՛ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով ներկայացված բողոքը և թե՛ 06.04.2022թ. ներկայացվում բողոքի լրացումը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թե՛ շտկում կատարելու ներկայացված պահանջը և թե՛ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում շտկում պահանջելու վերաբերյալ, թերի են և հակասում գնումներ մասին ՀՀ օրենսդրությանը.

Մասնավորապես.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրով բացակայում է տեղեկատվություն առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ, բոլոր այդ հատվածներում նշված է միայն Filters, ինչը միանշանակ հանդիսանում է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ և

ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է պահանջեր շտկում վերոհիշյալ փաստաթղթում, ինչը չի կատարվել:

Ելնելով վերոգրալից՝ գտնում ենք, որ պետք է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը կրկին ծանուցի «Սենտրալ» ՍՊԸ-ին՝ շտկում կատարելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոշարադրված լրացուցիչ փաստերը՝ կրկին խնդրում Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով բողոքը բավարարել:»:

Ընկերություն 15.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի մեկ այլ լրացում, հայտնելով հետևյալը.

«Մանրամասն ծանոթանալով «Երևանի Ավտոբոնս» ՓԲԸ-ի համար «Պրոմոուշն» ՍՊԸ-ի /այսուհետ Կատարող/ կողմից ներկայացված դիրքորոշմանը, ակնհայտ է դառնում այն կարևոր հանգամանքը, որ կատարողը չի տիրապետում ապրանքների գնման բուն գաղափարին, իսկ մասնագիտական գիտելիքների պակասի պատճառով հնարավորություն չի ունեցել ճիշտ հասկանալու «Սենտրալ» ՍՊԸ-ի /այսուհետ Ընկերություն/ ներկայացված պահանջի բովանդակությունը անվանելով այն «անհեթեթություն»:

Ըստ մրցույթի հրավերի «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի համար անհրաժեշտ էին պահեստամասեր.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*Ամբողջական անվանումը*	*Տեխնիկական բնութագիրը*
1	*Յուղագտիչ /Հայգեր/ /01756/*	*Նախատեսված Հայգեր KLQ 6770 G ավտոբուսների համար, շարժիչ YC4E-30, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը: Ներկայացնել հավաստագիր, որ նշված ապրանքը համապատասխանում է Հայգեր KLQ 6770 G մակնիշի ավտոբուսի:*
2	*Օդի ֆիլտր/Օդագտիչ 00165/ 11G13-09511*	*Նախատեսված Հայգեր KLQ 6770 G ավտոբուսների համար, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը: Ներկայացնել հավաստագիր, որ նշված ապրանքը համապատասխանում է Հայգեր KLQ 6770 G մակնիշի ավտոբուսի:*
3	*Օդի խոնավության զտիչ/Հայգեր/ /02663/*	*Նախատեսված Հայգեր KLQ 6770 G ավտոբուսների համար, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը: Համապատասխան մակնշմամբ, ներկայացնել հավաստագիր, որ նշված ապրանքը համապատասխանում է Հայգեր KLQ 6770 G մակնիշի ավտոբուսի*
4	*Վառելիքի զտիչ/կոշտ/ /02087/*	*Հայգեր KLQ 6770 G, շարժիչ YC4E-30, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը:*
5	*Վառելիքի զտիչ/նուրբ/ /02088/*	*Հայգեր KLQ 6770 G, շարժիչ YC4E-30, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը:*
6	*Մարտկոց /01773/*	*Մարտկոցի չափերը (513x189x203/223),6 CT135-140A; Սառը պարպման հոսանքը 900A, Բևեռականությունը ուղիղ: Երաշխիքային ժամկետ 12 ամիս: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը:*

Համապատասխան քանակություններով.

1	*հատ*	*882*

2	հատ	261
3	հատ	96
4	հատ	200
5	հատ	200
6	հատ	236

Տրամաբանորեն ակնհայտ է, որ պահեստամասերը միմյանցից տարբեր են անվանումներով, տեխնիկական հատկություններով բանականաբար նաև արժեքներով:

Մրցույթի ժամանակ 1-ից 3, 4 և 5 չափարաժիններում նշված չեն եղել ապրանքների անվանումները: Նված են եղել ֆիրմայի անվանում Fi Iters, ապրանքային նշան Fi Iters, մակնիշ Fi Iters, արտադրողի անվանում Fi Iters, իսկ տեխնիկական բնութագիր դաշտում բացակայում է ապրանքի անվանումը 1-ին չափաբաժնի մասով Յուղազտիչ, և որպես տեխնիկական բնութագիր շարադրված է հետևյալ միտքը՝

Նախատեսված Հայգեր KLQ 6770 G ավտոբուսների համար, շարժիչ YC4E-30, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը: Ներկայացնել հավաստագիր, որ նշված ապրանքը համապատասխանում է Հայգեր KLQ 6770 G մակնիշի ավտոբուսի:

Չենք վիճարկում ապրանքի արտադրողի անվանումը, մակնիշը կամ ապրանքային նշանի հարցը, այլ ներկայացվում է, որ բնութագիրը թերի է, այսինքն Կատարողի մոտ, որոշակի տրամաբանության առկայության դեպքում պետք է հարց կառաջանար «Ին9 կամ ինչպիսի ապրանքի մասին է միքը» և շտկում պահանջեր Ընկերությունից հստակեցնելու տեխնիկական բնութագիրը և շարադրվեր. «Յուղազտիչ նախատեսված Հայգեր KLQ 6770 G ավտոբուսների համար, շարժիչ YC4E-30, համաձայն «Հայգեր» ֆիրմայի տեխ. պայմանների Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխան մակնշմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը՝ Վաճառողը: Ներկայացնել հավաստագիր, որ նշված ապրանքը համապատասխանում է Հայգեր KLQ 6770 G մակնիշի ավտոբուսի:»

Մնացած չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ևս շարադրելով նման կերպ:

Սակայն կատարողի գնահատածից տեխնիկական բնութագրերը 1-3, 4 և 5 չափաբաժինների մասով չեն տարբերվում միմյանցից, բայց տարբերվում են քանակներով և գներով, հետևաբար Ընկերությունը կարող է օրինակ 1-ին չափաժնով նախատեսված

յուղազտիչը վաճառել 2-րդ օդազտիչի լրակազմի և 3-րդ չափաբաժնի Օդի խոնավության զտիչի համար ներկայացված գներով և ստանալ գերշահույթ 3 անգամ շատ:

Կամ էլ նշված տեխնիկական բնութագրերով հետագայում կնքել պայմանագիր Կատարողի կողմից կազմելու պատճառով կառաջացնի վիճելի հարցեր Պատվիրատուի և Մատակարարի համար, վիճելի «ապրանք» բազմիմաստ մտքի համար ադյոք այն յուդազտիչ է, օդագտիչ է, մի գուցե ղեկն է:

Հենց սա է այն համգամանքը, որ Կատարողը չի հասկանում Ընկերության ներկայացրած պահանջի էությունը և գնման բուն գաղափարը չի պատկերացնում, որ հիմնված է ճիշտ տեխնիկական բնութագրերով ապրանքների վրա, այնուհետև Գնումների մասին սահմանված նորմերով, օրենքների կիրառմամաբ, պայմանագրերի կնքմամբ և ապրանքների ձեռքբերմամբ:

Յուղի, վառելիքի, օդի և արգելակման զտիչները պարտադիր ենթակա են Տ ժամանակի ընթացքում փոխարինվելուն, ուշացումների դեպքում կվնասվի շարժիչը, կարգավորման համակարգը, կխափանվի «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի բնականոն աշխատանքը :

Ամփոփելով հստակ հիմնավորումները և ի պատասխան Կատարողի «Բողոքաբերի գործողություններն ուղղված են գնման ընթացակարգը տապալելուն» որոշակի բառերի հաջորդականություն է, որը չի համապատասխանում իրականությանը, ներկայացվում են հիմնավորումներ որպեսզի ընթացակարգը կայանա կնքվի պայմանագիր:»:

3. <u>«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4855-2022 գրությամբ դիմել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 22.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.03.2022թ.-ի թիվ 235-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 23.03.2022թ. գրության սրորև ներկայացնում ենք մեր գրավոր դիրքորոշումը՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 24.02.2022թ.-ին հայտարարված ավտոմեքենաների պահեստամասերի (այսուհետ՝ Պս/հեստամասեր) ձեռքբերման «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում «Սենտրալ» ՍՊԸ-ի (այսուհետ Բողոքաբեր) կողմից 22.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 բողոքի (այսուհետ՝ Բողոք) վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Հայտնում ենք, որ 2022թ.-ի մարտի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող Պատվիրատուի շենքում ժամը 15:30-ին տեղի է ունեցել Պահեստամասերի ձեռքբերման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած Բողոքաբերի (ՀՎՀՀ՝ 00154817, հեռ.՝ +37496669605, էլ. հասցե՝ central.llc@yandex.com, հասցե՝ ք. Երևան Եղվարդի 108) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրում միաժամանակ լրացված էր և 4.5. և 4.6. բաժինները, մինչդեռ պետք է լրացվեր կամ 4.5. կամ 4.6. բաժինը, հայտարարգրի 4.5. (և 4.6.) բաժնում մանսակցության չափը նշված էր 100%, մասնակցությունը՝ ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված էր «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով, այսինքն հարկավոր էր կատարել հստակեցումներ, ինչպես նաև հայտարարգրի 4.7.1. բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէր:

Գնահատող հանձնաժողովը որոշեց 07.03.2022թ. նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ Բողոքաբերին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված, անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Բողոքաբերի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացված՝ շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ 10.03.2022թ. բացման-գնահատման նիստի որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց Բողոքաբերի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ Բողոքաբերի տվյալները՝ համապատասխան հիմքերով, 11.03.2022թ. N ԵԱ 199-ել գրությամբ գրավոր ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Հայտնում ենք նաև, որ գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի շրջանակներում գործել է օրինաչափ՝ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

Միաժամանակ Բողոքի քննության շրջանակներում ներկայացնում ենք միջնորդություն.

Հաշվի առնելով, որ Երևանում քաղաքային տրանսպորտի բնականոն գործունեության պատշաճ ապահովումն ուղղակիորեն կապված է մարտկոցների անխափան մատակարարմամբ, որը բխում է հանրային շահերից՝ խնդրում եմ կիրառել «Գնումների մասին» օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը, թույլատրելով շարունակել գնման գործընթացը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով՝ հաշվի առնելով գործընթացի կարևորությունը և հրատապությունը:

Ինչ վերաբերում է բողոքում նշված այն փաստին, որ Բողոքաբերին մեկ անգամ ևս պետք է ծանուցվի շտկման ծանուցումը, հայտնում ենք հետևյալը. Պատվիրատուի կողմից Բողոքաբերին 07.03.2022թ. ծանուցմամբ ներկայացված թերությունները շտկվել են վերջինիս կողմից, ինչը նշանակում է, որ հիշյալ ծանուցմամբ մանրամասն և հստակ ներկայացված են եղել բոլոր անհրաժեշտ անհամապատասխանությունները և Բողոքաբերի մոտ որևէ անհասկանալի նշում չի արձանագրվել, սակայն Բողոքաբերի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացված՝ շտկման ենթակա Հավելված 1.2-ը

ստորագրված չէ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից և հաստված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Եվ, քանի որ Կարգի 41-րդ կետով շտկումը շտկելու հնարավորություն սահմանված չէ, Պատվիրատուին պարտավորեցնել կատարել նման բացառություն բխում է միայն Բողոքաբերի շահերից և վերջինիս տալիս է առավելություն ՀՀ գնումների գործընթացում մնացած բոլոր հնարավոր մասնակիցների նկատմամբ, այդպիսով իսկ չպահպանելով Բողոքում նշված Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Բողոքաբերի գործողություններն ուղղված են գնման ընթացակարգը տապալելուն և գտնում ենք, որ Բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն 11.04.2022թ.-ի թիվ 310-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 24.02.2022թ.-ին հայտարարված ավտոմեքենաների պահեստամասերի ծեռքբերման «ԵԱ-ԷԱՃԱՊՅԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում «Սենտրալ» ՍՊԸ-ի (այսուհետ Բողոքաբեր) կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԷՕ-2022/32 բողոքի (այսուհետ՝ Բողոք) քննության նպատակով 30.03.2022թ.-ին ժամը 15:30-ին հրավիրված նիստին վերջինիս ներկայացուցչի կողմից հնչեցված մտքերը, ինչպես նաև 06.04.2022թ.-ին և 07.04.2022թ.-ին ներկայացված Բողոքի լրացումները, ներկայացնում ենք հետևյալը.

Ընթացակարգի հայտերը բացվել են eauction.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022թ.-ի մարտի 3-ին 15:30-ին: Հակադարձ աճուրդի (մեկնարկը՝ 2022-03-04 15:30) ավարտից հետո գնահատող հանձնաժողովը գնահատել է համակարգի կողմից 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին (որի համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն Պատվիրատուն ունի 10 աշխատանքային օր) և, Բողոքաբերի մոտ արձանագրելով անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, 07.03.2022թ.-ին նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել է Բողոքաբերին մեկ աշխատանքային օրվա ընթացքում

շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Բողոքաբերի կողմից ներկայացված՝ շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված է հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը, գործելով իրավաչափ, Բողոքաբերի հայտը գնահատել է անբավարար և մերժել է (հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվ պահանջները): Այնուհետև, վերջինիս տվալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազոր մարմնին վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով (Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների):

Վերոնշյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ ամսաթվերը, ներկայացված են գնահատող հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրությունում, որը սահմանված կարգով համակարգի միջոցով ծանուցվել է մասնակիցներին և հրապարակվել է տեղեկագրում:

Բողոքաբերի կողմից ներկայացված Բողոքի լրացումներում Կարգից ներկայացված մեջբերումը 41-րդ կետի մասով չի համապատասխանում գործող Կարգի 41-րդ կետին, քանի որ գործող 41-րդ կետը 02.05.19թ.-ին լրացվել, իսկ 10.10.19թ.-ին խմբագրվել է և այժմ գործում է հետևյալ բովանդակությամբ. «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:»:

Ինչպես և նշված է լրացման մեջ՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն «Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում», սակայն այդ նույն հոդվածի 3-րդ մասով ներկայացված է նաև թե ինչ տեղեկատվություն պետք է պարունակի հիշյալ արձանագրությունը, մասնավորապես օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով պահանջված տեղեկատվությունը արձանագրությունում ներառելու համար Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն Պատվիրատուն ունի 10 աշխատանքային օր: Իսկ էլեկտրոնային աճուրդի դեպքում հիշալ հոդվածով պահանջված տեղեկատվությունը բացման նիստին առկա չէ և հասանելի չէ ոչ ոքի (բացառությամբ համակարգը սպասարկող ընկերության), և կարող է հասանելի լինել Պատվիրատուի միայն հակադարձ աճուրդի ավարտից հետո, որը սկսվում է ոչ շուտ, քան բացման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Գնահատող հանձնաժողովի գործողությունների նկատմամբ մեղադրանք է հնչում նաև Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասով («Հայտերի գնահատման նիստ ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում») սահմանված պահանջները խախտելու մեջ, ինչը անհիմն է և հակասում է Բողոքաբերին, քանի որ 1-ին լրացման մեջ ներկայացված տեղեկատվության համաձայն 10.03.2022թ. կազմած նիստի արձանագրությունը գնահատման նիստի արձանագրություն է, իսկ վերջինս սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում և համակարգի միջոցով ծանուցվել է մասնակիցներին:

Ի գիտություն բողոքաբերի և վերջինիս ներկայացուցչի՝ գործող Կարգով այլ բացման և գնահատման նիստերի տարանջատում չկա: Փոխարենը սահմանվում է «բացման և գնահատման» նիստ հասկացությունը, մասնավորապես Կարգի 40-րդ, 41-րդ, 43-րդ կետերում, իսկ 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է հետևյալ պահանջը՝ «Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում

են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.»:

Բողոքաբերը նշում է՝ «Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թե՝ շտկում կատարելու ներկայացված պահանջը և թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումը «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում շտկում պահանջելու վերաբերյալ, թերի են և հակասում գնումներ մասին ՀՀ օրենսդրությանը», և դարձյալ հղում է կատարում Կարգի 41-րդ կետի այլևս չգործող բովանդակությանը: Այնուհետև Բողոքաբերը նշում է, որ «Իր կողմից ներկայացրած առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրով բացակայում է տեղեկատվություն առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ, բոլոր այդ հատվածներում նշված է միայն Filters, ինչը միանշանակ հանդիսանում է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերի նկատմամբ և ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է պահանջեր շտկում վերոհիշյալ փաստաթղթում, ինչը չի կատարվել» և գտնում է, որ գնահատող հանձնաժողովը կրկին պետք է ծանուցի Բողոքաբերին շտկում կատարելու վերաբերյալ:

Հրավերով ներկայացվում է նման պահանջ, միայն եթե պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտում նշում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային ւսնվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, հակառակ դեպքում մասնակցի կողմից հայտը ներկայացնելիս հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակները, իսկ էլեկտրոնային աճուրդի դեպքում պարզապես չեն լրացվում համապատասխան սյունակները: Կարգի 14-րդ կետով գնահատող հանձնաժողովին վերապահված լիազորությունների մասով Գնահատող հանձնաժողովն է գնահատում հայտերը, որոշում Ընթացակարգի հաղթողին և գնման ընթացակարգը հայտարարում չկայացած, ուստի և մասնակցի կողմից նշված «պետք է պահանջեր շտկում» արտահայտությունը և դրանով պայմանավորված «կրկին պետք է ծանուցի» եզրահանգումը անթույլատրելի է և կարելի է դիտարկել միայն որպես վերջինիս սուբյեկտիվ կարծիք, որը ոչ մի իրավական հիմնավորում չունի: Անգամ եթե Բողոքաբերը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը կարող էր իր ներկայացրած տեղեկատվությունը համարել անբավարար և պահանջեր առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և

արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում իրենից, այս դեպքում «Կրկին շտկման ծանուցում» ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Բողոքաբերն արդեն իսկ ներկայացրել է թերի փաստաթուղթ, որը ոչ միայն իրավական որևէ ուժ չունի (Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ), այլև հաստատված չէ նույնիսկ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից:

Հաշվի առնելով, որ Բողոքաբերի կողմից արդեն իսկ չեն պահպանվել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները (Ինչով պայմանավորված Գնահատող հանձնաժողովը պարտավոր էր Վերջինիս հայտը գնահատել անբավարար և մերժել)՝ պարտավորեցնել Պատվիրատուին շրջանցել ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը և կրկին ծանուցել Բողոքաբերին, սակայն այս անգամ արդեն այլ բովանդակությամբ շտկում, անտեսելով Բողոքաբերի խախտումը, գտնում ենք, որ 2-րդ լրացումը դուրս է Բողոքի բովանդակությունից և ենթակա է մերժման:

Բողոքի քննության նպաստակով հրավիրված նիստին վերջինիս ներկայացուցչի կողմից հնչեցված մտքերի վերաբերյալ՝

«Քանի որ, ի տարբերություն այլ հավելվածների, որտեղ վերջին հատվածում կա տնօրենի անուն ազգանուն ու ստորագրության հատված, իսկ Հավելված 1.2-ում նման տեղեկատվություն տեղադրված չէ, ինչը ենթադրում է, որ Ընկերությունը պարտավոր չէ Հավելվածի վերջում դնի իր էլեկտրոնային ստորագրությունը ի հավաստումն վերոնշյալի, և մենք այս առումով կարծում ենք, որ ընկերության կողմից գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշված բոլոր թերությունները, որոնք վերաբերում էին բաժինների մասով լրացված տեղեկատվությանը, էտ բոլոր կատարված դիտողությունները հաշվի են առնվել և շտկվել են և վերջում էլեկտրոնային ստորագրությունը չդնելը այն դեպքում, երբ որ Հավելված 1.2-ը չի պահանջում տեղեկատվություն (տնօրենի անուն ազգանուն ու ստորագրության հատված) և Ընկերությունը Հավելված 1.2-ը չի հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ».

Մասնակցից չի պահանջվել, որ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի վերջին հատվածում դրվի տնօրենի վերաբերյալ տեղեկատվություն կամ որ տնօրենի կողմից վերջինս ստորագրված լինի: 07.03.2022թ.-ին Բողոքաբերին ներկայացված ծանուցման մեջ

հստակ և հասկանալի նշված են այն բոլոր անհամապատասխանությունները, որոնք արձանագրվել են Հավելված 1.2-ում, և անգամ եթե արձանագրված, թերությունները շտկվել են մասնակցի կողմից, հանձնաժողովը կարող էր և չդիտարկել այդ փաստը, քանի որ ներկայացված փաստաթուղթը իրավական որևէ ուժ չունի, և, որ ամենակարևորը ստորագրված չէ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից:

«Եթե համապատասխան էլեկտրոնային հարթակում (e-register) ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում ես, և հավելված 1-ում դնում ես այդ հարթակում զետեղված հղումը...Ինչը ևս մեկ անգամ հավաստում է, որ Հավելված 1.2 ը կարող է էլեկտրնային թվային ստորագրությամբ հաստատված չլինի»:

E-register-ը՝ ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրը, պաշտոնական հարթակ է, որտեղ ընկերությունները լրացնում են Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ՀՀ արդարադատությանն նախարարի 2021թ. օգոստոսի 30 ի N 416 Ն հրամանով հաստատված «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման, ներկայացման և իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման» կարգի համաձայն:

Եթե Մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս (հրավերի Հավելվսծ 1) «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բլսոերը պետք է փոխարինի «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1132-ի կամ հավելված 1.3-ի (սահմանվում է հրավերով)» բառերով և մասնակցության հայտով ներկայացնի նաև հրավերով նախատեսված հավելված 102-ը կամ 1.3-ը (ըստ տվյալ հրավերի):

Եթե Մանակցի կողմից Հավելված 1-ում նշվում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքեջի հղում, ապա տվյալ հղումով պետք է հասանլեի լինի ՀՀ արդարադատության նախարարի 2021թ. օգոստոսի 30փ N 416-Ն հրամանով հաստատված «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման, ներկայացման և փրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված

վերջին հայտարարագրի հաստատման» կարգով սահմանված և տվյալ գնման ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Եթե Մասնակցի կողմից ներկայացվում է իրական շահառուների վերաբերյալ Հայտարարագիր՝ հրավերով սահմանված ձևաչափով, ապա վերջինս պետք է համապատասխանի հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես պետք է ստորագրված լինի հիշյալ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից, ինչը Բողոքաբերի կողմից ներկայացված շտկման ենթակա փաստաթղթում բացակայում է, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (Ականավորված) տարբերակով: Իսկ «Սենտրալ» ՍՊԸ-ն Հավելված 1-ով ներկայացրել է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«Հավելված 1.2-ի ստորագրությունը այնքան էական չէ, որ կա նաև այլընտրանք: E-register-ում լրացնում ես տեղեկատվությունը, հղումը դնում ես, որ մարդը հղումով մտնի տեսնի: Մի փաստաթուղթ, որը e-register-ում էլ ստորագրությամբ չի հաստատվում»:

Կարծում ենք այս միտքը որպես դիմում-առաջարկ Բողոքաբերը կարող է ներկայացնել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, հետագայում գնումների մասին ՀՀ օրենսդրությունում անհրաժեշտ փոփոխություններ անելու և Բողոքաբերի դիտարկումը ի կատար ածելու համար, սակայն, այս պահի դրությամբ հիշյալ միտքը դիտարկում ենք որպես Բողոքաբերի սուբյեկտիվ կարծիք, և գտնում ենք, որ այս միտքը իրավական որևէ հիմք չունի:

«Եսկարծում եմ, որ եթե Հավելված 1.2-ը պիտի մասնակցի տնօրենի կողմից ստորագրվեր, ապա առնվազն այդ վերջում կտեղադրվեր տեղեկատվություն ընկերության անունի և տնօրենի անուն, ազգանուն հատված, որը կա բոլոր հավելվածների տակ, բացառությամբ Հավելված 1.2-ի»:

Հավելված 1.2-ում կան համապատասխան բաժիններ՝ 1.1.7 (Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը) և 1.1.3 (Հայտարարագիրը ներկայացնող անձի

ստորագրությունը) և այս անհասկանալի մեջբերումը թողնում ենք առանց մեկնաբանության, քանի որ առնվազն զվարճալի է:

Բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին Բողոքը քննող մարմնի կողմից, երբ հարց է բարձրանում հայտարարագրի 1.3.3 (Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը) դաշտով պահանջվող ինֆորմացիայի բացակայության վերաբերյալ, Բողոքաբերի ներկայացուցիչն ասում է, որ դրա մասին իրենք լրացուցիչ կտեղեկացնեն, սակայն առ այսօր այդ մասով որևէ տրամաբանական լրացուցիչ հիմնավորում չի ներկայացվել Բողոքաբերի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը, հայտնում ենք, որ նշված տեղեկատվությունը հերյուրանք է, տվյալների կեղծիք, որով Բողոքարերի ներկայացուցիչը փորձում է մեղադրելով գնահատող հանձնաժողովին արդարացնել Բողոքաբերին, իսկ վերջիններիս խնդրանքները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, մասնավորապես 3-րդ կետով նշվածը (պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել Բողոքաբերին շտկում կատարելու վերաբերյալ/մանրամասն նկարագրելով, թե ինչը պետք է շտկվի/), անհեթեթություն են և հակասում են ՀՀ գնումների մասին օրենսդրությանը, այլև Բողոքաբերին տալիս են առավելություն ՀՀ գնումների գործընթացում գործող մնացած բոլոր հնարավոր մասնակիցների նկատմամբ, այդպիսով իսկ չպահպանելով Բողոքում նշված Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները: Եվ ևս մեկ անգամ հայտնում ենք, որ կարծում ենք՝ Բողոքաբերի գործողություններն ուղղված են գնման ընթացակարգը տապալելուն և գտնում ենք, որ Բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն 19.04.2022թ.-ի թիվ 420-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Սենտրալ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Բողոքաբեր) կողմից 15.04.2022թ. Ձեզ ներկայացված գրության, հայտնում ենք, որ Բողոքաբերը վերլուծություն կատարարելու և՛ մասնագիտական կարծիք ներկայացնելու փոխարեն, գրության բովանդակությունը տեղափոխել է անձնական դաշտ՝ վերագրելով ավելորդ խոսքեր «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ին: Հայտնում ենք Ձեզ, որ ի տարբերություն անբարեխիղճ մատակարար Բողոքաբերի, Պատվիրատուն տարիներ ի վեր սպասարկել է Երևան քաղաքի ավտոբուսային ցանցը և ունի բավարար մասնագիտական գիտելիքներ իրավիճակը գնահատելու համար:

Ի լրումն վերոգրյալի խնդրում և պահանջում ենք Ձեզ, պարտագրել Բողոքաբերին զերծ մնալ հետագա նման մեկնաբանություններից և ոչ պատշաճ գործողություններից:

Միաժամանակ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ իրական կարծիք ներկայացնելու փոխարեն, Բողոքաբերը ներկայացնում է սուբյեկտիվ և չհիմնավորված մեղադրանքներ Պատվիրատուի հասցեին:

Ինչ վերաբերում է ընթացկարգի հրավերով ներկայացված գնման առարկաների թյուրըմբռնմանը, հայտնում ենք, որ գնման առարկան սահմանվում է հրավերով, որի համար ներկայացվում է նաև տեխնիկական բնութագիր: Մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկները ևս ներկայացվում են գնման առարկայի համար, որով և բացառվում է «Յուղազտիչը կամ օդազտիչը» ընկալել որպես օրինակ «Ղեկ»: Ինչպես նաև, հրավերում առկա տեղեկատվության տարակերպ կամ թերի ընկալման կամ այլ անհրաժեշտ դեպքերում մասնակիցը կարող էր օգտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի պարզաբանումներ պահանջելու իր իրավունքից:

Իսկ ինչ վերաբերում է «Յուղի, վառելիքի, օդի և արգելակման զտիչների փոխարինման ուշացումների դեպքում շարժիչի և կարգավորման համակարգի վնասվելուն և դրանով պայմանավորված «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի բնականոն աշխատանքի խափանմանը», վստահաբար հայտնում ենք Ձեզ, որ Պատվիրատուն ունի բավարար միջոցներ և պաշար իր բնականոն աշխատանքն ապահովելու համար և այդ հարցի միակ պատասխանատուն Պատվիրատուն է: Միաժամանակ հայտնում ենք, որ անգամ Բողոքաբերի կողմից նշված հիշյալ ապրանքների հրատապ անհրաժեշտությունը չի կարող պարտադրել Պատվիրատուին Բողոքաբերի նման անբարեխիղճ և անպարտաճանաչ գործընկերներ ունենալ:

Ամփոփելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 15.04.2022թ. Բողոքաբերի կողմից ներկայացված գրությունը դուրս է ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 բողոքի շրջանակներից և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 03.03.2022թ.-ի ժամը 15:30 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն, «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ն և «Օպտիպարտ-Ամ» ՍՊԸ-ն:

iii. «Սենտրալ» ՍՊԸ-ն, «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ն և «Օպտիպարտ-Ամ» ՍՊԸ-ն ներկայացված հայտերով eauction.armeps.am համակարգի իջոցով ներկայացրել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.03.2022թ.-ից 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրում միաժամանակ լրացված է և 4.5. և 4.6. բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5. կամ 4.6. բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի 4.5. (և 4.6.) բաժնում մանսակցության չափը նշվել է 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի 4.7.1. բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:

v. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է նիստը կասեցնել և ծանուցել ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած «Սենտրալ» ՍՊԸ-ին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

vi. Նույն կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ շտկման ենթակա Հավելված 1.2-ը, ստորագրված չէ հայտարարգիրը ներկայացնող անձի կողմից և հաստված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

vii. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ գնման ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

viii. «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանի ամբողջական նկարագրով 1-ից 5-րդ չափաբաժինների մասով որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում նշել է՝ «Filters» անվանումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 22.03.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

- 1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող

իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշ, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ **համակարգի միջոցով:** Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ ունեցող ապրանքներ:

Հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Հրավերի 2-րդ մասի՝ էլեկտրոնային աճուրդի հայտը պատրաստելու և աճուդին մասնակցելու հրահանգի 2.1-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտում ներառվող փաստաթղթերին և դրան հաստատմանը ներկայացվող պահանջները սահմանված են նույն հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնով: Դիմում-հայտարարության (հավելված 1) ձևաթուղթը մասնակիցը ներբեռնում է համակարգից, իսկ սույն հրավերով նախատեսված դեպքում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը մասնակիցը մուտքագրում է (լրացնում է) համակարգում:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող

են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սենտրալ» ՍՊԸ-ն, «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ն և «Օպտիպարտ-Ամ» ՍՊԸ-ն eauction.armeps.am համակարգի իջոցով ներկայացրել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով, սակայն «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 1-ից 5-րդ չափաբաժինների մասով որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում նշել է՝ «Filters» անվանումը: Հանձնաժողովի 03.03.2022թ.-ից 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից

Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել նիստը կասեցնել և ծանուցել ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած «Սենտրալ» ՍՊԸ-ին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սակայն «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ շտկման ենթակա Հավելված 1.2-ը, ստորագրված չէ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից և հաստված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ գնման ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 1-ից 5-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և Հանձնաժողովի 03.03.2022թ.-ից 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, Հանձնաժողովի կողմից վերոնշյալ չափաբաժինների մասով ապրանքի ամբողջական նկարագրում չարձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում թույլ է տվել Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների խախտում, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ շտկման մասին ուղարկված ծանուցմամբ (արձանագրությամբ) Ընկերության հայտում առկա բոլոր անհամապատասխանությունները չեն հայտնաբերվել (արձանագրվել), որպիսի հանգամանքը հանգեցրել է Կարգի 41-րդ կետի խախտմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է բավարարման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 22.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/32 ծածկագրով բողոքը բավարարել:

1. Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և գնման ընթացակարգը 1-ից 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:
- ընդունել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկման ծանուցում ուղարկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**